

«ՎԱՆԱԶՈՐԻ Զ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Զ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
օրենքի 2.03.2017 թ. թիվ 148 Լ/Կ հրամանի

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 1 23.02.2017թ.

Վանաձոր

2017թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՎԵՐ

1. Սույն կանոնադրությունը սահմանում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան կամ ՎՊՀ) մանկավարժության ֆակուլտետի (այսուհետ նաև՝ Ֆակուլտետ) գործունեության իրավական հիմքերը:
2. Սույն կանոնադրության ընդունման իրավական հիմքերն են՝ «Իրավական ակտերի մասին», «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, Համալսարանի կանոնադրությունը և ներքին իրավական ակտերը, Համալսարանի ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը:
3. Ֆակուլտետը Համալսարանի ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հիման վրա մշակում և Ֆակուլտետի գիտական խորհրդում ընդունում է իր կանոնադրությունը, որը հաստատում է Համալսարանի գիտական խորհուրդը:
4. Ֆակուլտետի կանոնադրության և Համալսարանի ֆակուլտետի օրինակելի կանոնադրության դրույթների միջև հակասություն առաջանալու դեպքում գործում են Համալսարանի ֆակուլտետի օրինակելի կանոնադրության դրույթները:
5. Ֆակուլտետը Համալսարանի գիտական խորհրդի առաջարկությամբ ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:
6. Ֆակուլտետի պաշտոնական անվանումն է՝
հայերեն՝ ՎՊՀ մանկավարժության ֆակուլտետ.
ռուսերեն՝ Педагогический факультет ВГУ.
անգլերեն՝ Pedagogical Faculty, VSU:
7. Ֆակուլտետի գտնվելու վայրն է՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36:
8. Ֆակուլտետը Համալսարանի գիտակրթական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանում է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն՝ մեկ կամ մի քանի մասնագիտություններով, իր կանոնադրությանը համապատասխան օժտված է իրավունքներով և կրում է պարտականություններ:
9. Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, իր կանոնադրությամբ, ինչպես նաև Համալսարանի կառավարման մարմինների, Ֆակուլտետի կառավարման մարմինների՝ իրենց իրավասության սահմաններում ընդունած իրավական ակտերով:
10. Ֆակուլտետն ունի կնիք (միայն հայերենով), սահմանված կարգով ունի նաև պաշտոնական ձևաթուղթ, խորհրդանիշ և կարող է ունենալ անհատականացման այլ միջոցներ:
11. Ֆակուլտետը կազմված է երեք ամբիոններից և մեկ կենտրոնից:

II. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

12. Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և Ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան, միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների գուգակցմամբ:

13. Ֆակուլտետի կառավարման մարմիններն են Ֆակուլտետի գիտական խորհուրդը, դեկանատի խորհուրդը և դեկանը:

14. Ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմինը Ֆակուլտետի գիտական խորհուրդն է (այսուհետ նաև՝ Գիտխորհուրդ), որի նախագահը Ֆակուլտետի դեկանն է ի պաշտոնե:

15. Գիտխորհուրդը կազմված է ի պաշտոնե, հրավիրյալ և ընտրովի անդամներից: Գիտխորհրդի ի պաշտոնե և հրավիրյալ անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել Գիտխորհրդի կազմի կեսը:

16. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են Ֆակուլտետի դեկանը, ամբիոնների վարիչները, Ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահը և արհմբյուրոյի նախագահը:

17. Ֆակուլտետի գիտական խորհրդի անդամների առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են, որի կեսը սովորողներն են: Գիտխորհրդի ընտրովի անդամների (բացի սովորողներից) թեկնածությունները համամասնորեն առաջադրում են Ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները: Նրանց թիվը հաշվարկվում է ըստ տվյալ ստորաբաժանման հաստիքների գումարային թվաքանակի համամասնության: Գիտխորհրդի ընտրովի անդամներ կարող են առաջադրվել միայն Ֆակուլտետի հիմնական կամ ներքին համատեղությամբ աշխատող պրոֆեսորներ, դոցենտներ, ոլորտի այլ մասնագետներ:

18. Ֆակուլտետի գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսը սովորողներն են, որոնց առաջադրումը և ընտրությունն իրականացնում է Ֆակուլտետի ուսանողական խորհուրդը:

19. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմը և դրանում փոփոխությունների կատարումը Ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ հաստատվում է Համալսարանի ռեկտորի հրամանով:

Ֆակուլտետի գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

Ֆակուլտետի գիտական խորհրդի անդամների թիվը 20 է:

20. Ֆակուլտետի գիտական խորհուրդը՝

1) Ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հիման վրա ընդունում է Ֆակուլտետի կանոնադրությունը և ներկայացնում Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը:

2) Համալսարանի ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ Ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, լուծարելու, վերակազմավորելու վերաբերյալ:

3) ընդունում է որոշումներ Ֆակուլտետի կրթական, գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ հարցերի վերաբերյալ և հսկում դրանց կատարումը:

4) իրականացնում է Ֆակուլտետի դեկանի ընտրությունը և պաշտոնանկությունը:

- 5) լսում է Ֆակուլտետի դեկանի ամենամյա հաշվետվությունը և գնահատում նրա գործունեությունը.
- 6) Համալսարանի հոգաբարձուների խորհրդում, Համալսարանի գիտական խորհրդում և այլ մարմիններում առաջադրում է Ֆակուլտետի ներկայացուցիչների թեկնածուներին.
- 7) Համալսարանի գիտական խորհրդում հաստատելու նպատակով Համալսարանի ռեկտորին է ներկայացնում Ֆակուլտետի ուսումնական պլանները.
- 8) լուծում է սույն կանոնադրությունից և Համալսարանի այլ ներքին իրավական ակտերից բխող, Ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեությանը վերաբերող այլ հարցեր:
21. Ֆակուլտետի գիտական խորհրդում որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:
22. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն 8 անգամ:
23. Գիտխորհրդի նիստն իրավագոր է Գիտխորհրդի անդամների ցուցակային կազմի երկու երրորդի ներկայության դեպքում:
- Քվեակազմի (քվորումի) բացակայության դեպքում հայտարարվում է Գիտխորհրդի նիստի անցկացման նոր ժամանակը՝ նույն օրակարգով:
24. Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումները պարտադիր են Ֆակուլտետի աշխատողների և սովորողների համար:
25. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերը հրավիրում և վարում է Գիտխորհրդի նախագահը՝ Ֆակուլտետի դեկանը:
26. Գիտխորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ռեկտորը և/կամ պրոռեկտոր(ներ)ը:
27. Ֆակուլտետի գիտական խորհրդի՝ Ֆակուլտետի դեկանի ընտրության օրակարգով բաց նիստը վարում է դեկանը, իսկ դեկանի ընտրության համար ներկայացված թեկնածուներին թվում պաշտոնավարող դեկանի թեկնածության առկայության դեպքում՝ Ֆակուլտետի գիտական խորհրդում ընտրված նախագահողը:
28. Դեկանի պաշտոնանկության հարցը քննարկելու նպատակով հրավիրվող նիստը վարում է ռեկտորը:
29. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի նախագահողը բացում և փակում է նիստը, առաջարկում է նիստի աշխատակարգը, ապահովում է դրա կատարումը, քվեարկության է դնում օրակարգի հարցերը և անհրաժեշտության դեպքում կազմակերպում է հաշվիչ հանձնաժողովի ընտրությունը:
30. Ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարն ի պաշտոնե Ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահն է:

31. Դեկանի կողմից նիստը հրավիրելու անհնարինության դեպքում Գիտխորհրդի նիստը հրավիրվում է դեկանի պաշտոնակատարի կամ ռեկտորի կողմից:
32. Գիտխորհրդում դեկանի ընտրության և պաշտոնանկության քվեարկությունը փակ, գաղտնի է:
33. Ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից դեկանի ամենամյա հաշվետվությունը լսելու նիստում Գիտխորհուրդը քվեարկությամբ գնահատում է դեկանի գործունեությունը: Դեկանի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում ռեկտորը մեկ շաբաթվա ընթացքում հրավիրում է Ֆակուլտետի գիտական խորհրդի արտահերթ նիստ՝ դեկանին անվստահություն հայտնելու հարցի քննարկման և որոշում ընդունելու համար:
34. Դեկանին անվստահություն հայտնելու Գիտխորհրդի նիստի ընթացքում ընթացակարգային խախտումներ հայտնաբերելու դեպքում ռեկտորը հնգօրյա ժամկետում՝ մինչև դեկանի պաշտոնանկության նպատակով հրավիրված նիստը, Ֆակուլտետի գիտական խորհրդում նշանակում է նոր քվեարկություն:
35. Դեկանին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունվելու դեպքում ռեկտորը հնգօրյա ժամկետում լուծում է դեկանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:
36. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, նիստին մասնակցող անդամների անվանացանկը, օրակարգի հարցերը, ելույթների հակիրճ բովանդակությունը, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և քարտուղարը, ովքեր պատասխանատու են արձանագրությունը ճիշտ կազմելու համար: Նիստի օրակարգը և ընդունված որոշումները երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են Համալսարանի ռեկտորին՝ Համալսարանի ինտերնետային կայքում հրապարակելու նպատակով:
37. Ֆակուլտետի դեկանատի խորհուրդը դեկանին կից խորհրդակցական մարմին է, որը Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում քննարկում է Ֆակուլտետի գործունեության ոլորտներին վերաբերող հարցեր: Ֆակուլտետի դեկանատի խորհրդի անվանական կազմը դեկանի ներկայացմամբ հաստատում է Համալսարանի ռեկտորը:
38. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է դեկանը՝ իր իրավասությունների սահմաններում, Համալսարանի և Ֆակուլտետի կանոնադրություններին համապատասխան:
39. Դեկանը կարող է ունենալ տեղակալ, որի թեկնածությունները ներկայացնում է Համալսարանի ռեկտորին՝ հրամանագրման:
40. Դեկանն ընտրվում և պաշտոնանկ է արվում Ֆակուլտետի գիտական խորհրդում՝ Ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգին համաձայն:
41. Ֆակուլտետի դեկանը՝
- 1) կազմակերպում և ղեկավարում է Ֆակուլտետի կրթական, գիտական, արտադրական, միջազգային և այլ գործունեությունը.

- 2) ապահովում է Համալսարանի մարմինների և Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումների կատարումը.
 - 3) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալի թեկնածություն(ներ)ը.
 - 4) Համալսարանի ռեկտորին առաջարկություններ է ներկայացնում Ֆակուլտետի ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, նույն կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, տեղափոխման (այլ բուհից կամ այլ մասնագիտությունից), ուսուցման ձևի փոփոխման, համապատասխան արձակուրդ ձևակերպելու վերաբերյալ,
 - 5) կազմակերպում է ուսումնական դասացուցակների կազմումը և վերահսկում է դրանց կատարումը Ֆակուլտետում,
 - 6) վերահսկում է քննությունների և ստուգարքների անցկացման գործընթացը Ֆակուլտետում ,
 - 7) իր լիազորությունների շրջանակում խրախուսում, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության է ենթարկում Ֆակուլտետի ուսանողներին,
 - 8) լուծում է Ֆակուլտետի կանոնադրությունից բխող և Ֆակուլտետի ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր,
 - 9) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի և Ֆակուլտետի կանոնադրություններով նախատեսված այլ լիազորություններ:
42. Դեկանը արձակում է հրամաններ, տալիս է հրահանգներ, որոնց կատարումը պարտադիր է Ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների, աշխատողների և սովորողների համար:

III. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

43. Ֆակուլտետի հիմնական ստորաբաժանումներն են ամբիոնները: Ֆակուլտետում կարող են գործել նաև լաբորատորիաներ, կենտրոններ և գիտակրթական ու այլ ստորաբաժանումներ:
44. Ամբիոնները Ֆակուլտետի գիտակրթական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են:
45. Ամբիոնն ապահովում է ուսումնական գործընթացը, իրականացնում է մեթոդական և գիտական հետազոտություններ:
46. Ամբիոնները գործում են Համալսարանի կանոնադրության և այլ իրավական ակտերի, Ֆակուլտետի կանոնադրության հիման վրա:
47. Ամբիոնի վարիչը կազմակերպում և վերահսկում է ամբիոնի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքները, ներկայացնում է ամբիոնը Ֆակուլտետի, Համալսարանի, համալսարանական ստորաբաժանումների, ինչպես նաև արտահամալսարանական կազմակերպությունների հետ հարաբերություններում:
48. Ամբիոնի վարիչը մրցութային հիմունքներով ընտրվում է Համալսարանի գիտական խորհրդում՝ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգին համաձայն:

49. Ամբիոնի վարիչը պատասխանատու է ամբիոնի գործունեության համար: Ամբիոնի վարիչն ըստ սահմանված կարգի տարին մեկ անգամ հաշվետվություն է տալիս Ֆակուլտետի գիտական խորհրդում:

50. Ամբիոնի աշխատանքների մասին ամբիոնի վարիչի հաշվետվությունների ժամկետները և ձևերը սահմանում է Համալսարանի գիտական խորհուրդը:

51. Ֆակուլտետի գիտական խորհրդում ամբիոնի վարիչի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում հնգօրյա ժամկետում հրավիրվում է Ֆակուլտետի գիտական խորհրդի արտահերթ նիստ, որի քննարկմանն է դրվում ամբիոնի վարիչին ետ կանչելու հարցը:

52. Համալսարանի գիտական խորհրդում ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը փակ, գաղտնի քվեարկությամբ ընդունվելու դեպքում ռեկտորը լուծում է ամբիոնի վարիչի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

53. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են պրոֆեսորները, դոցենտները, ասիստենտները և դասախոսները: Ամբիոնի կազմի մեջ մտնում են նաև գիտաշխատողները և ուսումնաօժանդակ համակազմը:

54. Ամբիոնը, ելնելով կատարվող կրթական, գիտական, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական աշխատանքների ծավալից ու ձևերից, ըստ սահմանված կարգի մշակում է իր աշխատողների ուսումնական բեռնվածությունը:

55. Ամբիոնների աշխատանքներն իրականացվում են ամբիոնների աշխատանքային ծրագրերին համապատասխան և ընդգրկում են ուսումնամեթոդական, գիտահետազոտական և աշխատանքի այլ տեսակներ:

56. Ամբիոնի կրթական և գիտական հիմնական հարցերը քննարկվում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի նիստերում: Ամբիոնի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել դեկանը և/կամ տեղակալը, ամբիոնի գիտաշխատողները, ասպիրանտները, ուսումնաօժանդակ համակազմը և այլ աշխատողները:

57. Ամբիոնի նիստերը հրավիրվում են՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարեկան ութ անգամ:

58. Ամբիոնի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունները ստորագրվում են ամբիոնի վարիչի ու ամբիոնի լաբորանտի կողմից:

59. Ամբիոնների, կենտրոնների և լաբորատորիաների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշումն ընդունում է Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը՝ Ֆակուլտետի գիտական խորհրդի առաջարկությամբ և Համալսարանի ռեկտորի ներկայացմամբ:

60. Հոգեբանական խորհրդատվական կենտրոնի նպատակն է մատուցել հոգեբանական խորհրդատվական ծառայություն համալսարանի ուսանողներին և աշխատակիցներին, աջակցել հաղթահարելու տարաբնույթ հոգեբանական խնդիրները, նպաստել ինքնակարգավորման, հաղորդակցական և սոցիալական հմտությունների ձեռք բերմանը, տարածել հոգեբանական նորագույն գիտելիքներ Լոռու մարզի դպրոցներում,

մանկավարժական և սոցիալական ուղղվածություն ունեցող հիմնարկներում, աշխատանք տանել կիրառական հոգեբանության, կիրառական մանկավարժության և սոցիալական աշխատանքի համակարգերի ստեղծման համար: օգնել համալսարանի ղեկավարությանը սոցիալ-հոգեբանական և սոցիալ-մանկավարժական խնդիրների լուծման հարցում, կատարել ազգային առանձնահատկությունների վերլուծություն՝ տեղական պայմանների հաշվառմամբ, հանրապետության զարգացման հեռանկարներին համապատասխան:

Հավելված

ՎՊՀ մանկավարժության

ֆակուլտետի կանոնադրության

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի

մանկավարժության ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները

1. Մանկավարժության ամբիոն.
2. Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոն.
3. Արվեստի ամբիոն.
4. Հոգեբանական խորհրդատվության կենտրոն: